ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Արայիկ Հարությունյանին-ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Ղարիբ Հարությունյան-ից

Ք. Գյումրի, Վ. Սարգսյան փող., շենք 1, բնակ.25
Հեռ՝ 093 972993
Էլ. փոստ՝ gharutyunyan84@gmail.com

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ
N03Ա950768

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Դիմում Խորհրդի նախագահի անունով
2. Կանոնադրություն և պետական գրանցման վկայական
3. Տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.
4. Մոտիվացիոն նամակ
5. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ «Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ նախագահ
Ղարիբ Հարությունյան

«24» Մայիս 2018 թ.

«ԿՈՄՊԱՍՍ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ "COMPASS" RESEARCH, TRAINING AND CONSULTANCY CENTER" ՀԿ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No

ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՆԱՄԱԿ

Հասարակական խորհրդում «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ի ներգրավման վերաբերյալ

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն իր գործունեությունը սկսել է 2014թ. փետրվար ամսից: Կենտրոնի նպատակներն ուղղված են Հայաստանի սոցիալական, տնտեսական, հասարակական, կրթական, քաղաքական և այլ ոլորտների արդյունավետ զարգացմանը՝ հետազոտությունների իրականացման, կրթական ծառայությունների և խորհրդատվության տրամադրման միջոցով:

Գյումրիում «Կոմպասս» ՀԿ-ի ստեղծումը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով

- Հասարակական կյանքի տարբեր ոլորտների գիտական հետազոտությամբ զբաղվող, ինչպես նաև կրթական ու խորհրդատվական ծառայություններ մատուցող անկախ կենտրոնի բացակայություն
- Տարբեր ոլորտներում հետազոտական մեծ ներուժի առկայություն
- Երիտասարդության շրջանում գիտահետազոտական գործունեության սակավություն
- Գիտահետազոտական, կրթական ու խորհրդատվական ոլորտներում համագործակցության ցանցի բացակայություն
- Արդիական հիմնախնդիրների ու թեմաների հիմնավոր հետազոտությունների սակավություն:

«Կոմպասս» ՀԿ-ն իր գործունեության ընթացքում բազմիցս առընչվում է թե՛ ՏԻՄ-ի և թե Կառավարության մի շարք մարմինների հետ, և Կենտրոնի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նաև այդ համագործակցության բնույթից ու ծևաչափից:

COMPASS

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ

«Կոմպասս» ՀԿ-ն չափազանց կարևորում է կրթական համակարգի արդիականացման ռազմավարական նշանակությունը, ոլորտում տարվող բազմաբնույթ փոփոխությունների արդյունավետության հարցն ու հանրության լայն շերտերի ներգրավվածությունն այդ գործընթացներում:

21.02.2018 թ. «Կոմպասս» ՀԿ-ն ՀՀ ԱԺ-ում մասնակցեց «Բարձրագույն կրթության հիմնախնդիրները». թեմայով լսումներին, որտեղ զեկույցով հանդես եկավ նաև Կենտրոնի փորձագետ Կարեն Պետրոսյանը, ով ներկայացրեց Կոմպասս ՀԿ-ի՝ օրենքի նախագծին վերաբերող մի շարք դիտարկումներից մի քանիսը:

Կարևորելով ՀՀ-ում նախնական և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական կրթական համակարգերի մշտական հետևողական աշխատանքի հարցը և կրթական համակարգում առկա այնպիսի հրատապ խնդիրների լուծումը, ինչպիսիք են՝

- կոռուպցիան,
- ոչ անկախ, քաղաքականացված հանրակրթական և բուհական կառավարման մարմինները,
- հանրակրթական ծրագրերի անարդյունավետությունը,
- ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի ու ընթացակարգերի անարդյունավետությունը, և մի շարք այլ խնդիրներ՝

«Կոմպասս» ՀԿ-ն ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելը համարում է կարևոր հնարավորություն՝ ոլորտում առկա հիմնախնդիրների բարձրաձայնման, փորձագիտական խորհրդատվությամբ աջակցման և ոլորտում իր ներդրումն ունենալու հարցում:

Կենտրոնի փորձագետների մասնագիտական պատրաստվածությունը և երիտասարդ հետազոտողների առաջադեմ մտածելակերպն ու մոտիվացիան կարող են լավագույնս ծառայել հասարակական խորհրդի հետագա արդյունավետ աշխատանքին, ուստի մեր մասնակցությունը հասարակական խորհրդի աշխատանքներին համարում ենք հիմնավոր ու նպատակային:

«Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն»
ՀԿ նախագահ՝ Ղարիբ Հարությունյան

«ԿՈՄՊԱՍՍ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ "COMPASS" RESEARCH, TRAINING AND CONSULTANCY CENTER" 05541122

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Կրթությունը մարդկության առջև կանգնած բազմաթիվ նոր, գլոբալ խնդիրների լուծման կարևորագույն միջոց է: Մեր երկիրն, ունենալով սահմանափակ բնական ռեսուրսներ և ներդրումային հնարավորություններ, կրթական ոլորտը դիտարկում է որպես առաջնային և զարգացումն ապահովող հիմնական գործոն: Հայաստանի Հանրապետությունում ավանդաբար գոյություն է ունեցել բարձրագույն կրթություն ստանալու հասարակական բարձր պահանջարկ: Ներկայումս, առավել քան երբևէ, բնակչությունը կրթությունը դիտարկում է որպես նյութական բարեկեցություն, սոցիալական կարգավիճակ և շարժունություն ապահովող հիմնական միջոց:

Կայացած կրթական համակարգը ենթադրում է մանկապարտեզների, դպրոցների և բուհական համակարգի փոխկապակցված և անխափան աշխատանք: Կայացած կրթական համակարգը ենթադրում է նաև, որ համակարգը ճանաչելի և ընդունելի է, համահունչ՝ աշխարհի ընդունած կրթական հարթակին:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն այս առումով նախաձեռնողական է: Վերջերս, հանրության դատին ներկայացվեց **«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը,** որը բավական մեծ արձագանք ստացավ: Հանրության մոտ նախագծի նկատմամբ մեծ հետաքրքրություն դրսևորվեց: Սակայն կային և այժմ էլ առկա է հարցերի մեծ փունջ, որն ունի հստակեցումների ու քննարկումների կարիք: Մասնավորապես, շատ է խոսվում համակարգում իրականացվող փոփոխությունների արդյունավետության ու որակի մասին, կրթության որակի մասին, որդեգրված սկզբունքների, ռազմահայրենասիրական դաստիարակաության ու դրա հետևանքների մասին:

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է նաև կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրությունում: Կրթության որակ

սահմանելով՝ օրենսդիրները հիմնականում նպատակ են ունենում սահմանել կրթության չափելի արդյունքներ, որոնք, կախված երկրից ու համատեքստից, որոշակիորեն տարբերվում են՝ չնայած նրանք հիմնականում փորձում են դրանք համապատասխանեցնել ՄԱԿ-ի տարբեր կառույցներում կրթության որակի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի տրամաբանությանը:

Հայաստանում 2016թ. մարտի 16-ին ընդունվել է կրթության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքը, որտեղ սահմանվել է կրթության որակ հասկացությունը: Այսպես, օրենքի հոդված 3-ի 10-րդ կետը սահմանում է. «Կրթության որակ ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է ՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը եւ ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների»: Նույն օրենքի 37-րդ հոդվածի 2.1 ենթակետը նշում է. «Սահմանում է կրթության որակի գնահատման չափանիշները՝ ըստ ուղղությունների: Դրանք կարող են հիմք դառնալ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները սահմանելու համար»:

Հասկանալի է, որ ցանկացած փոփոխության և կրթական բարեփոխման հետևում կանգնած է նախևառաջ ուսուցիչը: Կարող ենք ունենալ լավ դասագիրք, բայց եթե ուսուցիչը պատրաստ չէ պարապել այդ դասագրքով, մենք չենք ունենա փոփոխություն, իսկ հակառակ պարագայում, եթե ունենք լավ ուսուցիչ, բայց ոչ այնքան լավ դասագիրք, ուսուցիչը կկարողանա կրթության որակ ապահովել: Այս իմաստով առաջին կետերից մեկը ուսուցչի վրա կենտրոնացումն է և ուսուցչի դերի, հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների վերանայումն է 2 հիմնական ուղղություններով:

Առաջինն ուսուցչի որակն է՝ սկսած մանկավարժական կրթության պատրաստումից մինչև վերապատրաստումը և ազատության աստիճանի շնորհումը ուսուցչին: Մեր կրթական ծրագրերը պետք է լինեն օրինակելի, լինեն գործիք այն ուսուցչի համար, ով ունի դրա կարիքը, բայց միևնույն ժամանակ չսահմանափակեն այն ուսուցչին, ով ունի ստեղծագործելու մեծ հնարավորություն:

Երկրորդ ուղղությունը սոցիալական բաղադրիչն է: Պետք է հասկանանք, որ եթե չենք լուծում ուսուցչի սոցիալական խնդիրները, ուրեմն չենք կարող և նրանից ակնկալել լուրջ փոփոխություններ: Այս իմաստով մի քանի ծրագրեր են իրականացվում՝ սկսած դպրոցների ֆինանսավորման համակարգի ամբողջական վերանայումից, մինչև ուսուցիչներին ըստ որակի գնահատման և ըստ այդմ տարբերակված աշխատավարձերի սահմանման հնարավորությունից:

Հաջորդ կարևոր հարցը, որին պետք է անդրադառնալ կրթական ծրագրերի մշակման, և առհասարակ, կրթական համակարգի ռազմավարության մշակման ժամանակ, դա կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների առանձնահատկություններն են ՀՀ-ում: Ժամանակակից պայմաններում շուկայական մեխանիզմներն ու հարաբերությունները չեն կարող շրջանցել կրթական ոլորտը: Ինքնին հասկանալի է, որ կրթական ծառայությունների շուկան պետք է ձևավորվի համապատասխան առաջարկի և պահանջարկի շնորհիվ: Սակայն, այստեղ պարտադիր է հաշվի առնել կրթական ոլորտի առանձնահատկությունները և սոցիալական կարևոր նշանակությունը, հատկապես՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը և դրա պաշտպանվածությունը:

ՀՀ-ում արված որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ ըստ աշխատանքի կատեգորիայի գերակշռում են ծրագրավորման աշխատանքները, ինչը պայմանավորված է ՏՏ ոլորտի, և մասնավորապես , ծրագրավորման մասնագիտության նկատմամբ մեծ պահանջարկով:

Վաճառքի, սպասարկման և մարքեթինգի աշխատանքները շարունակում են գերակշռել ընդհանուրի մեջ, իսկ նախորդ հատվածի հետ համեմատած անկումը պայմանավորված է այլ ոլորտների ավելի ակտիվ ներգրավվածությամբ, այլ ոչ թե այս ոլորտի պասիվությամբ:

Գրաֆիկ 1 Ամենապահանջված աշխատանքների բաշխվածությունն ըստ աշխատանքի կատեգորիաների (Տոկոսային կշիռը ընդհանուրի մեջ)[1]

	Ծրագրավորում	Վաճառքի/սպասարկման կազմակերպում	Մարքեթինգ/Գովազդ/PR	Այլ SS/տեխնիկական	Սդմինիստրատիվ/օֆիսային	Բանկային/Վարկային	Հաշվապահություն/Հաշվետարություն	Վեբ/գրաֆիկ դիզայն	Որակի կառավարում	Տուրիզմ/Սերվիս	Պրոդուկտի/Նախագծերի կառավարում	Բիզնես/Կառավարում
Ամբողջը	19%	12%	8%	10%	7%	6%	3%	3%	3%	2%	2%	2%
Նախորդ հատված	19%	15%	9%	8%	7%	5%	3%	2%	2%	3%	3%	2%
Վերջին 6 ամիսները	19%	10%	8%	11%	6%	6%	3%	3%	3%	2%	2%	3%

Ակնհայտ է, որ ՀՀ-ում կրթական ծառայությունների շուկան, մեղմ ասած, այնքան էլ չի համապատասխանում աշխատանքի շուկայի նման պահանջարկին:

Այս ամենով հանդերձ, Վերջին տարիներին ՀՀ կրթության ոլորտն արձանագրել է նաև բազմաթիվ հաջողություններ:

Օրինակ՝ «Դասավանդիր Հայաստան» շարժումը, որն իրականացնում են մարդիկ, ովքեր ուսուցչությունը դարձրին առաքելություն: Դրանք երիտասարդներ են, ովքեր գնում են հեռավոր գյուղեր և նոր շունչ հաղորդում գյուղին ու գյուղի դպրոցին: Նման նախաձեռնություններից մեկն էլ «Արարատյան բակալավրիատ» ծրագիրն է: Այն կրթական հայալեզու ծրագիր է, որն ամբողջությամբ ստեղծված է Հայաստանում, ունի միջազգային ճանաչում և համարժեք է անգլիական A-Level և ամերիկյան Advanced Placement համակարգերին: Այսինքն, երեխաները հայկական դպրոցում, հանձնելով հայերենով քննությունները, ստանում են դիպլոմ, վկայական, որն առանց լրացուցիչ քննությունների ընդունվում և կրեդիտավորվում են աշխարհի լավագույն բուհերի կողմից:

Բոլորս գիտենք Թումոյի մասին, որն իր գործունեությամբ նոր շունչ բերեց: Այդ երեխաներին մենք արդեն անվանում ենք «Թումո սերունդ»: Թումոն կարողացավ ստեղծել շարժում՝դեպի կրթություն, դեպի տեխնոլոգիաներ:

[1] Աղբյուրը՝ staff.am
http://images.staff.am/upload/5/5/0/a/550ac955.pdf

Մեծ հաջողություն էր «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ցանցի տարածումը: Կրթության ոլորտում ունենք նաև թիմային հաջողություններ: Առարկայական միջազգային օլիմպիադաներում ամեն տարի դպրոցականներն արժանանում են մեդալների, որը համակարգային աշխատանքի արդյունք է: «Այբ» դպրոցի ռոբոտիկայի թիմը մի քանի տարի շարունակ ԱՄՆ-ում ամենահեղինակավոր National Robotic Challenge մրցույթից վերադառնում է արծաթե և բրոնզե մեդալներով,

Ամփոփելով հակիրճ վերլուծությունը, և նկատի ունենալով ՀՀ-ում տեղի ունեցող դրական փոփոխությունների մեծ ալիքը՝ հույս ենք հայտնում, որ ՀՀ ԿԳՆ-ն կլինի բաց, համագործակցող և նախաձեռնող, ինչպես նաև լավագույնս կիրացնի ՀՀ-ում կուտակված մարդկային ներուժն ու մտավոր կարողությունները, և այս մեծ աշխատանքում իրենց մասնակցության բաժինը կունենան գիտության, կրթության, քաղաքացիական հասարակության ու հասարակության լայրտերի բոլոր շահագրգիռ կողմերը:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն պատրաստ է իր մասնագիտական ներուժով մասնակցել և աջակցել կրթության ոլորտում սպասվող բոլոր դրական փոփոխություններին:

«Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ նախագահ՝
Ղարիբ Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնը 2014թ. փետրվար ամսին գրանցվել է որպես հասարակական կազմակերպություն: Կենտրոնի նպատակներն ուղղված են Հայաստանի սոցիալական, տնտեսական, հասարակական, կրթական, քաղաքական և այլ ոլորտների արդյունավետ զարգացմանը՝ հետազոտությունների իրականացման, կրթական ծառայությունների և խորհրդատվության տրամադրման միջոցով:

Կենտրոնի գործունեության հիմնական ոլորտները.

- Բնակչություն, սոցիալ-ժողովրդագրական հիմնահարցեր
- Կրթություն, հետազոտություն
- Տնտեսություն միկրո և մակրո մակարդակներում, սոցիալ-տնտեսական հիմնահարցեր
- Հասարակական հարաբերություններ-քաղաքացիական հասարակություն,
- Շրջակա միջավայր
- Այլ հիմնահարցեր:

Իրականացրած ծրագրերի համառոտ նկարագիր				
	Ծրագրի անվանում	**Ժամանակահատված**	**Դրամաշնորհատու**	**Ծրագրի իրականացման վայր**
1.	**«Մասնակցային մոնիտորինգ հանուն ասֆալտապատբարեկարգ և որակյալ ճանապարհների Գյումրիում»**	2018 մայիս-դեկտեմբեր	Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն, ԱՄՆ ՄՀԳ	Ք□ Գյումրի

2.	**«Հետազոտական դպրոց»**	2017թ հոկտեմբեր-դեկտեմբեր.	ՀՀ Սպորտի և երիտ. հարցերի նախարարություն	Շիրակի մարզ
3.	**«Քաղաքացիական մասնակցություն, տվյալների վիզուալացում և տեղական ինքնակառավարում»**	2017թ հոկտեմբեր-նոյեմբեր	Վիշգրադ միջազգային հիմնադրամ Հոլանդայի Թագավորության Արտաքին գործերի նախարարություն	Ք. Գյումրի
4.	**«Մասնակցային մոնիթորինգ հանուն որակյալ կոմունալ ծառայությունների Գյումրիում»**	2016թ հունիս-2017թ մարտ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն, ԱՄՆ ՄԶԳ	Ք. Գյումրի
5.	**«Համայնքների խոշորացում. Ռիսկ թե հնարավորություն»**	2016թ. սեպտեմբեր-հոկտեմբեր	Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն, Հաց Աշխարհին կազմակերպություն	Շիրակի մարզ
6.	**«Մասնակցային բյուջետավարում հանուն բարեկեցիկ համայնքի»**	2016 օգոստոս-2017 մարտ	Համայնքների ֆինանսիստների միավորում, ԱՄՆ ՄԶԳ	Գ. Ախուրյան
7.	**«Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում»**	2016թ մայիս-նոյեմբեր	ՀՀ սպորտի և երիտասրդության նախարարություն	Ք. Գյումրի

8.	**«Գյումրու ներդրումային միջավայրի ուսումնասիրություն»**	2015թ. սեպտեմբեր-դեկտեմբեր	Գյումրու քաղաքապետարան	Ք. Գյումրի
9.	**«Մեր փողերը, տեղեկացված լինելու մեր իրավունքը. Համայնքի վիզուալ բյուջե»**	2015թ. հունվար-2016թ. հունվար	ԲՀՀ Հայաստան, ԲՀՀ Հետազոտականկենտրոնների հիմնադրամ, Բուդապեշտ	Ք. Գյումրի

«Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ նախագահ՝
Ղարիբ Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՎԿԱՅԱԿԱՆ

Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա950768

Իրավաբանական անձի անվանումը

«ԿՈՄՊԱՍ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է Պետական ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման համարը **211.171.800768**
Գրանցման ամսաթիվը **2014-02-21**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **48881902**
Հարկ վճարողի հաշվառման համար **05541122**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

«21» 02 2014 թ.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա950768 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԿՈՄՊԱՍ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ Փ. / Շ / 32 ԳՅՈՒՄՐԻ 3115 ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Նախագահ՝ ՂԱՐԻԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
անձնագիր **AM0231035**, տրվ. **2011-03-14, 016** կողմից,
հասցե **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ Փ. / Շ / 1 / 25 ԳՅՈՒՄՐԻ 3115 ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը —

Այլ տեղեկություններ —

Կ.Տ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

«21» 02 2014 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

Տպագրված է ընդամենը «2» օրինակ
օրինակ «2»

Հաստատված է
««Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն»
հասարակական կազմակերպության
ժողովի որոշմամբ
«06» փետրվարի 2014թ.

Արձանագրություն թիվ 1

Նախագահ՝ Ղարիբ Հարությունյան

Գրանցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

«21» 02 2014թ.

Պետական գրանցման համար
211.171.800768
Վկայական 03 Հ 950768

Հարկ վճարողի հաշվառման
համար 05541122

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա. Գևորգյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն,
Շիրակի մարզ, ք. Գյումրի
2014թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Կոմպասս» հետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ (այսուհետ՝ կազմակերպություն) իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով միավորված ֆիզիկական անձանց՝ ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու նպատակով ստեղծած՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է:

1.2 Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման) պահից:

1.3 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հասարակական կազմակերպությունների մասին» 27 դեկտեմբերի 2001թ. ՀՀ օրենքի, այլ օրենքների, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.4 Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է օրինականության, հրապարակայնության, անդամության կամավորության, անդամների իրավահավասարության և ինքնակառավարման սկզբունքների հիման վրա:

1.5 Կազմակերպությունը քաղաքական նպատակներ չի հետապնդում և չի հարում որևէ կուսակցության:

1.6 Կազմակերպության սույն կանոնադրությամբ սահմանված իրավունքները գործում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:
Կազմակերպությունը կարող է գործել նաև այլ երկրներում՝ այդ երկրների օրենսդրություններին համապատասխան:

1.7 Կազմակերպությունն իր կանոնադրությանը համապատասխան կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազակերպություններին և ունենալ միջազգային այլ կապեր՝ կնքել համաձայնագրեր, պայմանագրեր, միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների հետ:
Կազմակերպությունն իր կանոնադրությանը համապատասխան կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ, այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

1.8 Կազմակերպության գտնվելու վայրը նրա մշտական գործող վերադաս մարմնի՝ կազմակերպության խորհրդի գտնվելու վայրն է՝
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Վ. Սարգսյան 32 3125

1.9. Կանոնադրության մեջ լրացումները և փոփոխությունները կատարվում են ժողովի որոշմամբ և ենթակա են պետական գրանցման:

2. Կազմակերպության գործունեության առարկան նպատակները և խնդիրները

2.1 Կազմակերպության նպատակներն ուղղված են նրա գործունեության առարկային, այն է՝ Հայաստանի սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների արդյունավետ զարգացմանը՝ հետազոտությունների իրականացման, կրթական ծառայությունների և խորհրդատվության տրամադրման միջոցով:

2.2 Կազմակերպության նպատակն է օրենքով սահմանված կարգով՝
ա/Աջակցել քաղաքացիների իրավագիտակցության բարձրացմանը, քաղաքացիական հասարակության ու ժողովրդավարության զարգացմանը, քաղաքացիական մասնակցության մեծացմանը,

[illegible] կյանքի տարբեր ոլորտների զարգացման արդյունավետ
բ/ Նպաստել հասարակակա[illegible]նը և իրականացմանը,
քաղաքականությունների մշակ[illegible]աղաքացիական հասարակության, ինչպես նաև բիզնես
գ/ Նպաստել քաղաքացիների[illegible]ոգացմանը և իրազեկության բարձրացմանը,
կառույցների կարողությունների[illegible]ոսի աշխատանքներին, որոնք կնպաստեն հասարակական
դ/ Աջակցել հետազոտական այ[illegible]մակերպմանը:
կյանքի առավել արդյունավետ կ[illegible]

2.3 Կազմակերպության խնդիր[illegible]ն են օրենքով սահմանված կարգով՝

ա/ Իրականացնել պետական [illegible]ռավարման և տեղական ինքնակառավարման մարմինների
կողմից սոցիալական, տնտես[illegible]ական, ժողովրդագրական, մշակութային և հասարակական
կյանքի այլ բնագավառներու[illegible]իրականացվող քաղաքականության հետազոտություններ,
վերլուծություններ, փորձագիտ[illegible]ական գնահատումներ,
բ/ Իրականացնել հասարակ[illegible]ական կյանքի տարբեր բնագավառներում տեղի ունեցող
գործընթացների և իրականաց[illegible]ի քաղաքականությունների միջազգային փորձի և ՀՀ-ում
այդ փորձի տեղայնացման հնարավորությունների ուսումնասիրություններ և
վերլուծություններ, հետազոտություններ, հասարակական կյանքի տարբեր ոլորտների
ներուժի գնահատումներ,
գ/ Տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն քաղաքացիական հասարակության
կառույցներին, տնտեսվարող սուբյեկտներին, ձեռնարկատերերին, գործարարներին և այլ
կառույցների ու անհատների,
դ/ Իրականացնել շահերի պաշտպանության միջոցառումներ, քարոզարշավներ, ծրագրեր,
ե/ Իրականացնել բիզնես, գիտակրթական և այլ ոլորտների զարգացման ու մասնավոր
կազմակերպությունների կողմից պատվիրված տարբեր բնույթի հետազոտություններ,
զ/ Կազմակերպել դասընթացներ, ոչ ֆորմալ կրթության միջոցառումներ, գիտաժողովներ,
կոնֆերանսներ, համագումարներ, կլոր սեղան-քննարկումներ, բանավեճեր և այլ կրթական,
գիտական և դաստիարակչական միջոցառումներ տարբեր թեմաների շուրջ,
է/ Ստեղծել տարբեր ոլորտների հետազոտողների ցանց և կանոնակարգել ցանցի
գործունեությունը,
ը/ Համագործակցել այլ տեղական և արտասահմանյան հասարակական
կազմակերպությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման
մարմինների, միջազգային կառույցների, մասնավոր ընկերությունների հետ,
թ/ Շավալել ՀՀ օրենսդրությամբ չարգելվող այլ գործունեություն:

3. Կազմակերպության իրավական կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1 Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում գրանցվելու պահից:

3.2 Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները:

3.3 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ առանձնացված գույք, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.4 Կազմակերպության անդամի անդամավճարի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի մեկ տոկոսի չափով՝ գանձումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ հաջորդ ամսվա առաջին կեսին:

3.5 Կազմակերպությունն ունի կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, դրոշմներ և ձևաթղթեր, օրենքով սահմանված կարգով գրանցված այլ նշաններ ու

անհատականացնող այլ միջոցներ: Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և/կամ օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (դրամով, տարադրամով):

3.6 Կազմակերպության անվանումն է.

հայերեն լրիվ՝ ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Կոմպասս» ՀԿ

Կազմակերպության անվանումն ընդունելի է հասարակական տեսանկյունից և տարբերվում է այլ կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային և օտարերկրյա հանրահայտ կազմակերպությունների անվանումներից:

3.7 Կազմակերպությունը իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

բ/ կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ, հանրահավաքներ, երթեր ու ցույցեր,

գ/ օրենքով սահմանված կարգով ներկայացնել և պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

դ/ համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

ե/ իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ,

Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները իրավաբանական անձինք չեն և գործում են Կազմակերպության հաստատած կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Կազմակերպության լիազորագրերի հիման վրա:

զ/ ստեղծել տնտեսական ընկերություններ կամ մասնակից դառնալ այդպիսի ընկերություններին,

է/ օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

3.8 Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան 7 օրացույցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,

բ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

գ/ վարել իր անդամների հաշվառումը,

դ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության բարձրագույն մարմնի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնության մատչելիությունը,

ե/օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ,

զ/ Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ պետական լիազորված մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել կազմակերպության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվելու կազմակերպության բարձրագույն մարմնի նիստին,

է/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար,

ը/ կազմակերպության կանոնադրության փոփոխությունները, լրացումները, կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և/կամ/ կազմակերպության մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեի փոփոխությունները 14 օրացույցային օրվա ընթացքում ուղղարկել պետական գրանցման մարմնին:

թ/ աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ:

ժ/ կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորություններով, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պարտավորությունների համար:

3.9 Կազմակերպությունն իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևերով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետազոտական, սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրերի, այլ միջոցառումների:

3.10 Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:

3.11 Կազմակերպությանը հասցված վնասը, որը հետևանք է պետական կամ այլ մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության իրավունքները խախտող կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման, ենթակա է փոխհատուցման այդ մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4. Կազմակերպության անդամ դառնալու և դուրս գալու կարգը: Անդամների իրավունքները և պարտականությունները

4.1 Կազմակերպության անդամ կարող են դառնալ 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց կամքի ազատ արտահայտման հիման վրա, կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.2. Մինչև 14 տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

4.3. 14-ից մինչև 18 տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

4.4. Կազմակերպության անդամ դառնալ ցանկացողները Կազմակերպության խորհրդին պետք է ներկայացնեն գրավոր դիմում: Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Կազմակերպության խորհուրդը:

Այսուհետ անդամ բառը համարժեք է նաև մասնակից բառին «անդամակցել», «անդամագրվել» բառերը՝ մասնակցել բառին, «անդամակցություն», «անդամություն» բառերը՝ «մասնակցություն» բառին:

4.5. Կազմակերպության հիմնադիրներից յուրաքանչյուրը կազմակերպության ստեղծումից հետո կազմակերպության անդամ է այնպիսի իրավունքներով ու պարտականություններով, ինչպիսիք ունեն կազմակերպության մյուս անդամները:

4.6. Անձի անդամությունը կազմակերպությանը իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք չէ:

4.7. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի.

ա/ ներկա գտնվել կազմակերպության ժողովին, եթե վերջինս անցկացվում է կազմակերպության անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել,

բ/ ծանոթանալ կազմակերպության ղեկավար մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունված որոշումների պատճենները (պատճենների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը),

գ/ ընտրել և ընտրվել Կազմակերպության ղեկավար մարմիններում,

դ/ մասնակցել Կազմակերպության ժողովի աշխատանքներին՝ նրա հերթական և արտահերթ նիստերում կանոնադրությամբ սահմանված կարգով,

ե/ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ,

զ/ Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները բողոքարկել ըստ վերադասության.

Կազմակերպության և կազմակերպության խորհրդի նախագահի որոշումները կամ գործողությունները, որոնք ընդունվել են օրենքի, կանոնադրության կամ կազմակերպության վերադաս մարմնի /բարձրագույն մարմնի/ որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարվել է կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, ըստ կանոնադրության 5.6 կետի «թ» ենթակետի կարող է բողոքարկել կազմակերպության խորհրդին:

Կազմակերպության խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի որոշումները, որ ընդունվել են օրենքի, կազմակերպության կանոնադրության, կազմակերպության բարձրագույն մարմնի ընդունած որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարվել է կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող են ըստ կանոնադրության 5.3 կետի վերջին պարբերության բողոքարկվել կազմակերպության բարձրագույն մարմնին՝ կազմակերպության ժողովին:

Կազմակերպության մարմինների որոշումները կարող են բողոքարկվել ըստ ենթակայության 30 օրվա ընթացքում այն օրվանից, երբ կազմակերպության անդամը իմացել է կամ պետք է իմացած լիներ համապատասխան վերադաս մարմնի կողմից ընդունված որոշման կամ իր իրավունքների խախտման մասին՝ ըստ ենթակայության կազմակերպության անդամների բողոքները պետք է քննարկվեն սույն կանոնադրության 5.2 կետի 2-րդ պարբերությամբ սահմանված կարգով՝ բողոքները ստանալու օրվանից ոչ ուշ քան 14 օրացույցային օրվա ընթացքում:

է/ Կազմակերպության ղեկավար մարմնի (այդ թվում բարձրագույն մարմնի) որոշումը, որն ընդունվել է օրենքի, կազմակերպության կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարվել է կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին,

ը/ ազատ դուրս գալ Կազմակերպության անդամությունից՝ գրավոր դիմում ներկայացնելով,

թ/ մասնակցել Կազմակերպության կազմակերպած բոլոր միջոցառումներին:

4.8. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

բ/ կատարել անդամավճարի մուծում՝ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված չափով,

գ/ հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման համար,

դ/ աջակցել Կազմակերպության անդամության համալրմանը,
ե/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.9. Կազմակերպության կանոնադրության, կարգապահական կանոնները խախտող անդամի նկատմամբ Կազմակերպության խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ, ընդհուպ մինչև Կազմակերպությունից հեռացնելը:

4.10. Կազմակերպության անդամը, որն ընդգրկված է կազմակերպության այլ մարմիններում չի կարող միաժամանակ ընտրվել վերահսկողություն իրականացնող մարմնի կազմում:

5. Կազմակերպության կառուցվածքը՝ կառավարման մարմինները, առանձնացված ստորաբաժումներ ստեղծելու կարգը

5.1 Կազմակերպության բարձրագույն մարմինը Կազմակերպության ժողովն է, որին պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

5.2 Կազմակերպության Ժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով: Կազմակերպության ժողովը կարող է լինել հերթական և արտահերթ: Կազմակերպության ժողովի հերթական նիստերը հրավիրում է կազմակերպության նախագահը երկու տարին մեկ անգամ: Կազմակերպության Ժողովի հերթական նիստի օրակարգի, նրա աշխատանքն անցնելու, տեղի, օրվա ու ժամի մասին կազմակերպության նախագահը մասնակիցներին պետք է ծանուցի ծանուցագրով, ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 14 օր առաջ:

Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի պատճառաբանված պահանջի դեպքում ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում հրավիրվում և տեղի է ունենում կազմակերպության Ժողովի արտահերթ նիստ, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն կազմակերպության Ժողովի հերթական նիստի հրավիրման համար նախատեսված եղանակով, սակայն ոչ ուշ, քան այդ արտահերթ նիստի անցկացման օրվանից 3 օր առաջ:

Կազմակերպության Ժողովը իրավասու է իր նիստերում հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են կազմակերպության անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ մեծամասնությունը:

5.3 Կազմակերպության բարձրագույն մարմնի՝ Կազմակերպության Ժողովի բացառիկ իրավասությունն է.

ա/ կանոնադրությունում փոփոխությունների և(կամ) լրացումների կատարումը կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը (եթե այն չի հաստատել հիմնադիրների ժողովը),

բ/ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,

գ/ կազմակերպության անդամների անդամավճարների չափի փոփոխման հաստատումը,

դ/ բացառապես Կազմակերպության Ժողովին ենթակա և հաշվետու մարմինների՝ այդ թվում Կազմակերպության խորհրդի, Կազմակերպության նախագահի և Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի կազմի ընտրությունը՝այդ մարմինների կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ընդորում նրանց լիազորությունների ժամկետները չեն կարող սահմանվել ավելին քան Կազմակերպության Ժողովի հերթական նիստի հրավիրման կանոնադրությամբ սահմանված պարբերականությունն է,

ե/ Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,

զ/ Կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից,

գ/ Կազմակերպության Ժողովի բացառիկ իրավասությանը կարող են վերապահվել նաև այլ հարցերի լուծում:

Կազմակերպության Ժողովը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել կազմակերպության այլ մարմնի:

5.4Սույն կանոնադրության 5.3 կետի «ա», «դ», «ե» և «զ» ենթակետերով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումները կազմակերպության Ժողովի կողմից ընդունվում են միաձայն:

Կանոնադրության 5.3 կետի «բ» և «գ» ենթակետերով սահմանված հարցերով որոշումներն ընդունվում են կազմակերպության անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

5.5Կազմակերպության խորհուրդը ընտրվում է Կազմակերպության Ժողովի կողմից կանոնադրությամբ սահմանված կարգով՝ երկու տարի լիազորությունների ժամկետով:

Նա իր աշխատանքները իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են 3 ամիսը մեկ անգամ: Խորհրդի անդամների 1/3-ի կամ նախագահի պահանջով կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

5.6 Կազմակերպության խորհուրդը.

ա/ հաստատում է խորհրդի հաշվետվությունը,

բ/ առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության Ժողովին նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի լուծման համար,

գ/ ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում է անդամությունից,

դ/ վարում Կազմակերպության ընթացիկ գործունեությունը Կազմակերպության Ժողովի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում,

ե/ ստեղծում առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, հաստատում է դրանց կանոնադրությունները, դրանց ղեկավար և գլխավոր հաշվապահ իրականացնող պաշտոնատար անձանց, այդ մասին որոշում ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում դիմելով պետական գրանցման մարմնին սահմանված կարգով գրանց հաշվառելու և հաշվառումից հանելու համար,

զ/ հաստատում է Կազմակերպության կարգապահական կանոնները և հրահանգները,

է/ ստեղծում է տնտեսական ընկերություններ,

ը/ իրավասու է որոշում ընդունել մեկ միլիոն դրամից ավել գնահատված շարժական և անշարժ գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում օտարելու և դուրս գրելու վերաբերյալ ըստ գույքի տեսակների և չափերի /շարժական և /կամ/ անշարժ/:

թ/ իրավունք ունի քննել և լուծել ցանկացած հարց, բացառությամբ Կազմակերպության Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերից:

5.7 Կազմակերպության խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են խորհրդի անդամների 2/3-ը: Խորհրդի որոշումները ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.8 Կազմակերպության նախագահը ի պաշտոնե խորհրդի անդամն ու նախագահն է: Նա ընտրվում է Կազմակերպության Ժողովի կողմից 2 տարի լիազորությունների ժամկետով:

5.9 Կազմակերպության նախագահը՝

ա/ հրավիրում է խորհրդի նիստեր,

բ/ կոորդինացնում է խորհրդի գործունեությունը,

գ/ իրականացնում է Կազմակերպության Ժողովի կողմից տրված այլ իրավասություններ:

5.10 Կազմակերպության նախագահը իր իրավասության սահմաններում, առանց լիազորագրի, գործում է Կազմակերպության անունից, առանց կազմակերպության խորհրդի որոշման ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, այդ թվում օտարում մինչև մեկ միլիոն դրամ գումարի գույք, անկախ գույքի տեսակից և չափերից /շարժական և անշարժ/, անկախ գույքի գնահատված արժեքից, գույքի դուրս գրումը կազմակերպության նախագահը կատարում է համաձայն կազմակերպության գործադիր մարմնի՝ կազմակերպության խորհրդի համապատասխան որոշման, ներկայացնում է նրա հաշիվները, տնօրինում է ֆինանսական ռեսուրսները, կնքում պայմանագրեր, այդ թվում

աշխատանքային, կազմակերպում Կազմակերպության անդամներից անդամավճարի գանձումը, Կազմակերպության վարձու աշխատողների համար իրականացնում է գործատուի ֆունկցիաներ, տալիս է լիազորագրեր, բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային հաշիվներ, կազմում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում անհրաժեշտ հաստիքները, արձակում է հրամաններ: Կազմակերպության նախագահը և ղեկավար մարմնում ընդգրկված այլ անձիք Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել, եթե նրանց մշտական աշխատանքի վայրը համարվում է Կազմակերպությունը: Կազմակերպության ղեկավար մարմնում ընդգրկված անձանց վարձատրության չափը սահմանում է Կազմակերպության խորհուրդը:

5.11 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը:

Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է կանոնադրությամբ սահմանված կարգով՝ լիազորությունների երկու տարի ժամկետով:

Նրա աշխատանքները իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են 3 ամիսը մեկ անգամ: Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամների 1/3 կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահի պահանջով կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

Վերստուգիչ հանձնաժողովը կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները կազմակերպության ժողովի հաստատմանը ներկայացնում է դրանց վերաբերյալ իր եզրակացության հետ միասին:

5.12 Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը իրավասու է.

ա/ ցանկացած ժամանակ անցկացնել կազմակերպության ֆինանսական գործունեության ստուգում,

բ/ անհրաժեշտ կազմակերպության գործունեությանն առընչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկմանն ենթակա առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության մարմիններ՝ սահմանելով այդ առաջարկությունների քննարկման ժամկետները,

գ/ Կազմակերպության պաշտոնատար անձանցից, անդամներից ու աշխատողներից պահանջել և ստանալ գրավոր կամ բանավոր տեղեկատվություն,

դ/ իրականացնել Կազմակերպության կանոնադրությունից կամ բարձրագույն մարմնի՝ Կազմակերպության ժողովի որոշումներից բխող այլ լիազորություններ:

Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրա նիստերին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.13 Կազմակերպության կողմից օրենքների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական լիազորված մարմինը, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև այլ իրավասու պետական մարմինները իրենց իրավասությունների՝ օրենքով նախատեսված բնագավառներին համապատասխան:

5.14 Կազմակերպության կողմից օրենքի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում, որոնք կարող են վերացվել Կազմակերպության ձեռնարկած միջոցառումներով, պետական լիազորված մարմինը կազմակերպություն է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով խախտումների վերացման կարգն ու ժամկետները:

6. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրները և օգտագործման կարգը

6.1 Կազմակերպության սեփականությունը գոյանում է.

ա/ անդամավճարներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից,

բ/ իր ստեղծած տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից,

գ) սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ, այդ թվում օտարերկրյա աղբյուրներից,
դ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

6.2 Կազմակերպության հիմնադիրների և անդամի՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացած գույքը կազմակերպության սեփականությունն է:

6.3 Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

6.4 Կազմակերպության հիմնադիրները և անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի /ներառյալ անդամավճարները/ նկատմամբ իրավունքներ չունեն:

6.5 Անդամները պատասխանատու չեն կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:

6.6 Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրների և անդամներին:

7. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

7.1 Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) և լուծարումը կատարվում է նրա բարձրագույն մարմնի՝ Կազմակերպության Ժողովի որոշմամբ, «Հասարակական կազմակերպությունների մասին» 27.12.2001թ. ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2 Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

7.3 Կազմակերպությունը կարող է միանալ այլ կազմակերպության, կազմակերպությանը կարող է/են միանալ այլ կազմակերպություն/կազմակերպություններ:

7.4 Կազմակերպությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների:

7.5 Կազմակերպությունից կարող է/են առանձնանալ կազմակերպություն/կազմակերպություններ:

7.6 Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:

7.7 Կազմակերպության/կազմակերպությունների վերակազմակերպման հետևանքով նրանց կանոնադրությունների փոփոխությունները և/կամ լրացումները կամ գործունեության դադարումը, ինչպես նաև նոր ստեղծված իրավաբանական անձինք պետական գրանցում են ստանում օրենքով սահմանված կարգով:

7.8 Կազմակերպությունը հարկադիր կարգով կարող է լուծարվել միայն դատարանի որոշմամբ՝ պետական լիազորված մարմնի պահանջով, օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

7.9 Կազմակերպության ժողովը լուծարման որոշման մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց Պետական Ռեգիստրին և վերջինիս համաձայնությամբ կազմավորում է լուծարային հանձնաժողով, օրենքով սահմանված կարգով սահմանում է լուծարային կարգը և ժամկետները:

7.10 Կազմակերպության լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը ուղղվում է կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե:

7.11 Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:

3. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

Կանոնադրության լրացումներն ու փոփոխությունները ենթակա են պետական գրանցման Օրենքությամբ սահմանված կարգով:

Կանոնադրության լրացումներն ու փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանց պետական գրանցման պահից, օրենքությամբ նախատեսված դեպքերում՝ նման գրանցում կատարող պետական մարմնին դրանց մասին տեղեկացնելու պահից: